

Ի Ս. Խ Ս. Չ Ն Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ա Կ Ի Ր

Ո՛ր 'ի լեառն ընդ իս ելցէ ձիթաստանեաց  
Մըգակից որ անդ խաչեալ գոլ Անմահին .  
Ամայի գնա յիւրայոցըն սիրելեաց  
Ապաշընորհն ելլբ երկիր, համբեր երկին :

Ինձ լըւարուք ապիրատիս, մահկանացուք,  
Որ 'ի ծով կենցաղականս այս զբաղմանց  
Մոլորամիտ սահիք 'ի խռան ամպրոպաց,  
Թէ մըխիթար խընդրէք վըշտացդ՝ ինձ լըւարուք :

Թօթափեցէք ըզմիտս 'ի սեաւ զըմբազաց,  
Հոգոց՝ որ զձեզ գերեն յանլոյս աղջամուղջ .  
Ես 'ի տըխուր ծածկեալ 'ի քօղ ըզգլուխ  
Հեծեծազին յեռից 'ի զիր զայս աւաչ : ...

Չանմահին տեսի զպատկեր կենդանազիծ,  
Բազուկքըն յեց յերկար փայտին 'ի միջավայր,  
Գըլուխն 'ի կախ, աղբերահոս կայլակ կողից  
Ոլոռնաձև ծորեալ յերկիր՝ մեղմիկ ողբայր :

Աստուած իմ Տէր, և զի՛ կաս լուռ անբարբառ,  
Ոչ ևս հընչիւն, չըրթանց բախել, շարժել բբբաց,  
Իրանրաթախիծ՝ ողբաս գմարդկան հոյլրս մեղաց,  
Չոր անխըլիրտ 'ի խաչին ծոց սրբբես իսպառ :

Ո՛չ ևս յունկն իմ ազգիցի բան քո կենաց,  
Մինչ յորոտալ քո 'ի բարձուէ քառաթևին,  
Վէմք արաստոյք պատասեցան երերազին .  
Ո՛ր ձեռք ժըպիրհ ըզկենսաբեր քո թևս պարզեաց :

Ոչ մարդ ոք 'ի մարդկանէ կանանցածին .  
Նա՛ բանսարկուն պիղծ ծըպտեցաւ ինք գլխովին  
Ի հրապոյրս ժանտ արծաթոյն ներկեալ յախտին,  
Անազգակ թափեալ ոճիրս յիւր լըսելին :

Աշխարելիդ Յուդաս, երբեմն Յուդաս սիրուն,  
Ժանտաժուտ այսօր վատթար չարին գործօն .  
Մատնութեան վարձըս խեղդ ոգւոյդ կախաղանի  
Ածեալ՝ թաւալ սանդարմետաց արկար 'ի վիհ : ...

Ո՛վ է կախեալդ այդ հոլանի 'նդ երկինս ու երկիր .  
Սարսուին ոսկերբս, արհաւիրք յիս զընան ցըրտինք .  
Ո՛ է սա, աղէ խօսեաց տիրամատնիչ,  
Ո՛ր խանձ յոգիդ խանձեաց արծաթն այն զօշոտիչ :

Դողումն ունի զերկինս, ցասումըն զերկրաւորս,  
Եւ աստըստին երկիր յիւրոց զզրդի հիմանց,  
Ըզկայ լուսնին էառ ճաճանչըն յերկնաւորս,  
Արեգական լըռեաց փայլումն յարշաւելեաց :

Աւաղ մեզ. իբր 'ի բընէ գերեալք մեղաց,  
Խոււ ձայնի մարդասիրին Հաստչին կամաց.  
Կոյր 'ի բարիս շընչոց անբան և անբզգայ,  
Բշնիւթ սիրեմք, և կողկողիմք յերկիր անկայ:

Չիք 'ի Գողգոթ մէզ և մըռայլ սինէական,  
Կամ շառաչիւն դըռոյթ ահեղ փայլատական,  
Անօգնական անոք աստ կայ օրինադիրն  
Յաւազակաց միջի կանգուն անպարտակիր:

Ինքն անխօս կայ. ու անշունչք լինին անդ ձայնատուր,  
Նա 'ի խոնարհ զանպարտական 'ի կախ կառափն  
Ամբիծ 'ի զոհ, 'ի սպանդ անմեղ վարի 'ի զուր,  
Աըրտի ողորմ զանթիւ մեղաց թուէ զսարափ:

Ո՛չ ինքրն և զանդընդապտոյտ սըփոեաց կոհակ՝  
Միով միայն շընչով. գիւրդ այծըմ ցաւի.  
Զհամատարած որ ըզծովուց գողեաց յատակ,  
Զուր արբուցէք, գուէ ահեղ, եմ՝ ծարաւի:

Ո՛վ բարութիւն, սէր քո միայն ած յայս 'ի չափ,  
Զանմահ բնութիւնըն մահացոյց՝ նըշաւակեաց.  
Ո՛ր ազգ իցէ մարդկան յայդ փորձ՝ մահուն 'ի ցաւ,  
Զերաշխեպս բառնալ զՀաստչիդ աշխարհաց:

Տեսէք, անցորդք, տեսէք 'ի ձեռս բեռապլինդ,  
Մէր և շընորհս տայ լիաբուռն և աննիազ.  
Զաջն յարևելս, զահեակն 'ի մուտքս կոյս տարած,  
Զորս թարթափիք յերկրի՝ կուչ զամենեսին:

Մի՛ յուլանայք, ընթացէք փոյթ 'ի կողին ծերպ,  
Ուր սէրն եռայ, ցածուցանէ զմեղացըն կեղտ.  
Թողէք ըզհեռ, զաջ յօղակապ յսաղաղութեան  
Տուք, և առջիք ըզհաշտութեան առհաւատչեայ:

Ոչ մեծատուն խըտրէ խաչեան, և ոչ աղքատ,  
Ընդ բնաւ ուրեք կըշիռ ունի զձեռն անարատ.  
Անդուստ սիրոյ թափին բեռք հուր բոցացայտ,  
Զհերձեալ սըրտից ձուլել փեռեկս և խըրամատ:

Ես հուսկ նոյեան նորոյ փայտիւ զերծ ապաստան,  
Զեզ որ յաշխարհ՝ ըղշիզ սիրոյ աւետ բերեմ.  
Թէ՛ յայս անկջիք՝ ձեզ ցածուցեալ է ջուրց հոսան,  
Իսկ եթէ ոչ՝ ես 'ի տապանն անդրէն լրեմ: